

## Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ - ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. ՅՈՒԹԱՑԻՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

Հայ իրականութեան դարաւոր պատմութեան անվիճարկելի ու բացարձակ մեծութիւններից են Հ. Ղեւոնդ Ալիշանը եւ Խրիմեան Հայրիկը, որոնք նախախնամութեան կամօք ծնուել են միեւնոյն դարաշրջանում եւ իրենց «աստուածամերձ վարքով ու ծովածաւալ գիտութեամբ» դարձել հայ ժողովրդի պատմական ճակատագրի եզակի կրողներից ու կերտողներից: «Դարերը շատ քիչ բան փոխանցած կը լինեին իրար, եթէ չլինեին մեծ մարդիկ»<sup>1</sup>, մի առիթով նկատում է գրականագէտ Վ. Մնացականեանը: Իրավէս, մեծերը ծնուում են ժամանակի հրամայականով. այսօր անվիճելի փաստ է, որ զեռեւս կենդանութեան օրօք ժողովրդի հաւաքական գիտակցութիւնը լիովին ամրագրել էր երկու հայորդիների՝ ի վերուստ սահմանուած առաքելութեան խորհուրդը: Եւ դա զարմանալի չէ: Հայոց բնաշխարհը եւ հայութիւնն ինքը՝ հայ մարդու հոգին ու շունչը, նիստուկացը, ուրախութիւնն ու դառնութիւնը, անցեալի ապրումներն ու ապագայի յոյսերն են երկու հայորդների աշխարհատեսութեան հիմնարար ու շարժիչ ուժերը, նրանց «ես»ի առանցքը: Դա յատկապէս տեսանելի է ժամանակակիցների յիշողութիւններում:

Ցայտնի է, որ յուշագրութիւնը (Փրանս. mémoires), ըստ հեղինակի հայեցողութեան, անցեալի՝ հետաքրքրութիւն ներկայացնող դէպքերի ու դէմքերի մասին յիշողութիւն է, որ ունի գրական սեռի առանձնայատկութիւն, առաջին հերթին՝ գրաւոր ինուքի դրսեւորման առումով:

Մշակութաբանական եւ աղբիւրագիտական նշանակութիւն ունեն Հ. Ղեւոնդ Ալիշանին եւ Խրիմեան Հայրիկին նուիրուած յուշերը, որոնք այնքան տպաւորիչ են, բազմազան ու պարտաւո-

1 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Վ., Անդրամդմերի մեծ ժամանակակիցը, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 10(1975), էջ 4:

ըեցնող, որ յուշագիրների մեծ մասը դժուարանում է ասելիքը ներկայացնել համապարփակ ու բնորոշիչ դատողութիւններով։ Յուշերը ներկայացւում են կառուցուածքային ներքին բաժանում-ներով՝ երկու հայորդիներն իբրև մարդ-անհատականութիւն, հոգեւորական, գրող, մանկավարժ...։ Եւ բոլոր տիրոյթներում մեծ ի-մաստով գերիշխում է բացառիկ հայրենասէրի կերպարը։ «Երկու եկեղեցականք կան, - գրում է Արփիար Արփիարեանը, - որոնց դէմքը նայելով երթեւ հայ մը չկրնար յագենալ՝ Խրիմեան եւ Ալիշան»<sup>2</sup>:

Հայ ազգի երկու զաւակներն ապրել են աշխարհագրական տարբեր տարածքներում։ Ալիշանը գիտակցական ողջ կեանքն անց է կացրել Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնում, սակայն նրա մասին յուշագրառումներ կատարել են ոչ միայն միաբանութեան հայրերը, այլեւ հայ մտաւոր սերուցքի բազմաթիւ ներկայացուցիչներ։ Մեծ հանրագիտակի մասին յուշեր են գրել Հ. Միմչոն Երեմեանը, Հ. Վարդան Հացունին, Արփիար Արփիարեանը, Գրիգոր Խալաթեանցը, Գէորգ Բաշինջաղեանը, Գրիգոր Արծրունին, Աւետիք Իսահակեանը եւ այլք։ Մխիթարեան միաբաններից միայն Ալիշանին են ժամանակակիցները ամբողջական յուշագրութիւններ նուիրել:

Խրիմեան Հայրիկի մասին նոյնպէս յուշագրական էջեր են հիւսել Աւետիք Իսահակեանն ու Ալեքսանդր Շիրվանզառէն, Հրաչեայ Աճառեանն ու Փանոս Թերլեմեզեանը, Աւետիս Ահարոնեանը եւ այլք։ Մկրտիչ Խրիմեանին մեծարել են Հայոց Հայրիկի պատուանունով, իսկ յուշագիրները կերպարագծել են նրա առինքնող դիմանկարը։ Բնագրերից քաղաքերում ենք, որ Խրիմեան Հայրիկը թուրքական հալածանքի ժամանակ կորցրել է ընտանիքը, 1862ին դարձել Տարօնի Սբ. Կարապետի առաջնորդ։ 1869ին ընտրուել է Պոլսի պատրիարք։ Օսմանեան կառավարութիւնը չի ներում Խրիմեանին Գում Գափուի ցոյցից յետոյ Բարձր Դռանն ուղղուած բողոքագիրն ստորագրելու համար։ Ուխտագնացութեան անուան տակ Խրիմեանին ստիպում են մեկնել Երուսաղէմ։ «Արծիւ» Խրիմեանը փակում է<sup>3</sup> Երուսաղէմում «ճնճղուկի վանդակի» մէջ։

2 Ալիշանը ժամանակակիցների յուշերում, Երեւան 1974, էջ 9:

3 ԿՈՐԻՒԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ, Երուսաղէմի հայկական քաղաքի գաղտմիջները, մաս Ա, Երուսաղէմ 2019, էջ 87:

**Իբրեւ յուշագրութեան բնորդներ՝ Ալիշանը եւ Խրիմեանը ներկայացւում են իրենց բացառիկ ու անժխտելի արժանիքներով, որոնք բացայսում են երկու հայորդիների թէ՛ մարդկային, թէ՛ հասարակական եւ թէ՛ ազգային ու հոգեւոր նկարագիրը, որոշակի լոյս սփոռում նրանց ստեղծագործական բնատուր քանքարի ճախրանքների վրայ։ Մեթոդաբանական տեսանկիւնից յուշագիրները յաճախ են նախապատութիւն տալիս արտաքին եւ ներքին նկարագրութիւններին, որոնց միջոցով ուրուագծուում են բնորդների էութիւնը, վարքագիծը, արարքների նախագրեալ-ները։ Յուշերում թէ՛ Ալիշանը, թէ՛ Խրիմեանը հիմնականում ամբողջանում են այս սկզբունքով։ ցուցադրւում են նրանց գործողութիւնների եւ վարքագծի բնորոշ դրուագներ, որոնք մեծ մասամբ ուղեկցւում են հեղինակի նկարագրական ու գնահատողական միջամտութիւններով, ուղղակի եւ անուղղակի խօսքով, այլ անձանց հետ առնչութիւններով։**

Անշուշտ, կարեւոր է, թէ ո՞վ է յուշագիրը, ի՞նչ պայմաններում եւ ո՞րտեղ են նրանք հանդիպել։ Օրինակ՝ Աւ. Խսահակեանը Սուրբ Ղազարի մեծ ճգնաւորին՝ Ալիշանին, առաջին անգամ հանդիպում է 1901ին Ապրիլի սկզբներին, երբ Վիեննայից մեկնում է Վենետիկ՝ Մխիթարեանների հարուստ գրադարանից օգտուելու, Խտալիան հնարաւորինս ամբողջական տեսնելու համար։ Հայր Միմէոն Երեմեանը առաջնորդում է նրան Ալիշանի մօտ։ «Մտնում ենք Ալիշանի խուցը, - գրում է Խսահակեանը, - մի ոչ մեծ սենեակ ծովահայեաց լուսամուտով։ Գասեղանին հակած է մի ալեւոր՝ փոքրամարմին, անարին, դալուկ մի սուրբ... եւ գրում է»<sup>4</sup>։

Հանդիպումը եւ զրոյցը Հայր Ալիշանի հետ խոր տպաւորութիւն է թողնում Խսահակեանի յիշողութեան մէջ եւ գրեթէ 50 տարի անց՝ 1948 թուականին, նա նոյն ջերմութեան ու սիրով թղթին է յանձնում «Ղեւնդ Ալիշան» յուշապատումը։ «Երիտասարդ Խսահակեանը անձամբ նանաչած մեծ վարպետներից երեք հոգու է առաւել պաշտել՝ Խրիմեան Հայրիկ, Ղեւնդ Ալիշան, Քրիստափոր Միքայէլեան»<sup>5</sup>, - արձանագրում է Վարպետի թոռը՝ գրականագէտ Աւիկ Խսահակեանը։

4 Խսահակեան, Ա., Երկերի ժողովածու, հ. 5, Երևան 1977, 9:

5 ԽՍԱՀԱԿԵԱՆ, Ա., Աւետիք Խսահակեանի երկրորդ ուղեւորութիւնը Երապա, 154: (<http://littrans.asj-oa.am/134/1/135-164.pdf>) (20.08.2020):

Ոչ պակաս ուշագրաւ է բանաստեղծի առաջին տեսակցութիւնը՝ նաեւ Խրիմեան Հայրիկի հետ։ Գուցէ եւ նախախնամութեան կամօք հանդիպումը վերջինիս հետ տեղի է ունենում 1897ին դարձեալ հայրենիքից դուրս՝ Վիեննայում, որտեղ Հայրիկը ժամանում է գործնական այցով։ Նրան դիմաւորող հայ երիտասարդների խմբում լինում է նաեւ իսահակեանը։ «Հայերս խումբինում մտնում ենք դակիինը, ուր բազմած է Հայրիկը ժպիտը դէմքին՝ պատկանելի եւ սիրալիր,- գրում է բանաստեղծը,- սակայն խորը եւ խելօֆ աչերում պարզապէս շողում է բարձր հոգու այն սրբազն վիշտը, որ բոլորիս վիշտն է, բայց նա միայն իր երկնային սրտով գգում է այնքան խորը եւ իր ողջ եռթեամբ։ Ահա մենք, նրա որդիներս, խոնարհում ենք նրա առաջ, համբուրում ենք կենդանարար աշը... Հայրիկը բոլորիս գուրգուրում է, սիրող հօր պէս հարցնում է իրաքանչիւրի դրութիւնը, պարապմունքը, հետաքրքրում է նրա կեանքով, խրատում է, կատակում է...»<sup>6</sup>։ Յաջորդ հանդիպումն արդէն 1901 էր, երբ Վենետիկից վերադարձած իսահակեանը մեծ տպաւորութիւններով այցելում է Էջմիածին՝ «Քաղցր պարտիք» հատուցելու Խրիմեան Հայրիկին։ Այդ հանդիպման մանրամասները իսահակեանը առաջին անգամ յիշատակում է 1907ին «Նոր ալիք» թերթում տպագրուած «Յուշեր Հայրիկի կեանքից» խորագրով յիշողութիւններում, որտեղ երկուստեք միահիւսուում են Ղեւոնդ Ալիշանի եւ Խրիմեան Հայրիկի յուշ-դիմանկարները՝ շաղախուած իսահակեանական սիրոյ եւ անօրինակ ակնածանքի ատաղծով։ Հանրագիտակ երկու մեծերի մտերմութիւնը ցուցադրուում է հէնց յուշագրութեան բնագրերում։ «Երբ մենքնում եի Վենետիկից,- գրում է Աւ. իսահակեանը,- գնացի Ալիշանի մօտ՝ վերջին անգամ տեսնելու եւ հրաժեշտ տալու։

Օրինեց ինձ, բարիքներ մաղքեց եւ ողջոյն ուղարկեց Խրիմեան Հայրիկին։

-Ինձմեն հարիւր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կ'ըսեն, որ շատ առոյց է, ծի կը նատի. հարկաւ այդպէս է. ան Մասիսի հովին տակ կը քնանայ, Արաքսի ջուրը կը խմէ, Հայատանի հացը կ'ուտէ, անոր հողի ուժը կ'առնէ...»<sup>7</sup>։

Ալիշանի կարօտագին ողջոյնին ի պատասխան՝ Խրիմեանը նոյնպիսի սիրով ու գորովանքով է խօսում Նահապետի մասին։ Իսահակեանը յիշում է Հայրիկի խօսքերը. «Մենք հասակալիցներ

6 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., Թիշատակարան, Երևան 1977, էջ 59-60:

7 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., Երկերի ժողովաժու, հ. 5, էջ 14:

ենք. ևս շատ կը սիրեմ անոր. անուշ գրիչ ունի: Նա շատ է ազդեց իմ գրչի վրայ. նա ինձ շատ բան է ներշնչեր: Ասա՛, ուրիշ ի՞նչ կ'ըմէք»<sup>8</sup>:

Իսահակեանի յուշագրական այս փոքրիկ պատառիկը, բացայացելով երկու հայրդիների փոխադարձ սէրն ու յարգանքը, բացառիկ արժէք է ներկայացնում: Հայրիկը՝ իբրև ստեղծագործող անհատ, իր խոնարհումն է բերում գրչի մեծ վարպետին: Առհասարակ, ինչպէս իրաւացիօրէն նկատում են գրականագէտներ Ա. Մադոյեանը, Հ. Պետրոսեանը, «Հայ մշակոյթի ուսումնաշրութեան, Եւրոպայում հայագիտութեան զարգացման գործում Հայրիկը շատ բարձր էր գնահատում՝ “Միջիթարեան գրավաստակ հայրերի” ծառայութիւնները: Նա առանձնակի սիրով էր կապուած իր “ծընթագից եւ սենդակից” Ղեւոնդ Ալիշանի հետ...»<sup>9</sup>:

Իրապէս, յուշագիրներից շատերն են շեշտագրում Ալիշանի պատմա-հայրենասիրական քերթողի մեծագոյն երախտիքն ու ներդրումը հայ գրականութեան պատմութեան ուկէ չղթայում:

Իսահակեանը շարունակում է յուշապատումը. բարձր գնահատելով Ալիշանի սրտառուչ ու ջերմ ողջոյնները՝ Խրիմեան Հայրիկը հրաման է արձակում. «Ես վաղը կը կարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասխի ջրէն ու Հայաստանի ծաղիկներէն ֆիշ մը վերցնեն եւ փոքրիկ արկդով մը դրկեն Վենետիկ:

Ինչպէս յետոյ իմացայ, Հայրիկի կողմից ուղարկուել էր մի փոքր արկդ այդ արմաղաններով, բայց մինչ հասնելը, դժբախտաբար, սիրելի նահապետը արդէն վախճանուած էր եղել»<sup>10</sup>:

Յուշերում նկարագրական խօսքը հեղինակները հիւսում են՝ կիրառելով այնպիսի յատուկ հնարյան, որոնք ձեւաւորում են յուշագրական բնագրի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկիւնից առանձնայատուկ նշանակութիւն են ձեռք բերում երկխօսութիւնները բնորդի եւ յուշագրողի միջնեւ: Ուշարժան է յուշագիր Մ. Զալեանի եւ Հ. Ալիշանի զրոյց-երկխօսութիւնը, որ ինքնօրինակ ապացոյցն է այն բանի, որ երկու մեծերը, չնայած մշտակայ հեռաւորութեանը, իրենց մտածումների ենթաշերտերում եւ զրոյցներում յաճախ են յիշել, զուգահեռել միմեանց կեանքն ու ապրումները: Զալեանը յիշում է.

8 Անդ, էջ 15:

9 ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, Երկեր, Երևան, 1992, 13-14:

10 ԻՍՍՀԱԿԵԱՆ, Ա., Երկերի ժաղավածու, հ. 5, 16:

«-Եօքանասութինն տարիս լրացաւ, «Զեր» Խրիմեան ինձնից հարիւր օրով մեծ է,- ասաց նա (Ղ. Ալիշանը) հնագէտի թշութեամբ:  
 -Ինչո՞ւ «մեր» եւ ոչ թէ «ձեր», - նկատեցի ես:  
 -Ինչպէ՞ս թէ «մեր»:  
 -Չէ՞ որ նա էլ տաճկաստանցի է:  
 -Այս, նիշտ է,- պատասխանեց նա ծիծաղելով»<sup>11</sup>,

**Բնորդները յուշերում ներկայանում են անցեալի պատկերների, գործողութիւնների զդժայում, որտեղ անհրաժեշտ կարգով ներկայ է հեղինակային եսը: Օրինակ՝ Ալիշանը հանդէս է գալիս իտալիայի թագուհու հետ երկխօսելիս, Նաբոյչոն զօրավարի հրովարտակը քննարկելիս, եւրոպական գիտնականների հետ մասնագիտական հարցերի շուրջ խորհելիս: Խրիմեան Հայրիկի հետ երկխօսում են մտաւորականութեան տարբեր ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, բազում տառապեալներ եւ այլք: Նա համայն տաճկահայերի Հայրիկն է:**

**Երկու հայորդիներին միաժամանակ յիշատակել է նաեւ յուշագիր Տիգրան Նազարեանը. «Եթէ համայն հայութեան մէջ անխտիր բոլոր խաւերում անկետայի ենթարկուէր, թէ ո՞վ է ժԹ. դարու ամենախոշոր, ամենահեղինակաւոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խօսքը, կամքը, տենչանեմքը ու մտորումը համայն հայութեան բայցանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լինէր, անշուշտ, միահայն երկու մարդի վրայ կանգ կ'առնեին: Խրիմեան ՀԱՅՐԻԿ (մինչեւ կարողիկոսանալը) եւ ՀԱՅԹ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ: Խսկ սրանցից որի՞ն կը տար առաւելութիւնը, միահայն ձեռնպահ կը մնար եւ չէր կարող ձեռքը խղճին ասել, Խրիմեան Հայրիկ՝, թէ՞ Հայր Ղեւոնդ Ալիշան: Խրիմեան Հայրիկ եւ Հայր Ղեւոնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենսարար, բուժիչ ու սննդարար նառագայթներ եղած են, համայն հայութեան սիրտ-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կոռող կոփողներ»<sup>12</sup>, **Յուշագրի այս ոգեշունչ խոստովանութեան ակունքները հասնում են զաղ մանկութիւն. զեռեւս օրօրոցից է լսել երկու մեծերի անունները եւ մեծացել ու դաստիարակուել նրանց «հրարորդք» գրքերով: «Ղարաբաղում մեր տունն է եղել առաջինը, ուր մտել են Ս. Ղազարի եւ Վարագայ հրատարակութիւնները:- գրում է Տ. Նազարեանը- նախորդ դարու կիսից հայրս էր Կ. Պոլսից զերմ բարեկամ Խրիմեան Հայրիկին եւ նրա Վարագն տպագրական մեքենայ նուիրո-****

11 Ալիշանը ժամանակակիցների յուշերում, էջ 83:

12 Անդ, էջ 163:

դը... Միաժամանակ Վենետիկին եւ Լայպցիգին էլ շատ մօտ եւ երկար տարիներ այդ տեղերի հոյակապ հրատարակութիւններով մեր տունը հեղեղողը»<sup>13</sup>:

**Անշուշտ,** Երկու հայորդիների նկատմամբ ունեցած հիացմունքը ու ակնածանքը միայն մանկական օրերի վառ տպաւորութիւններ չեն. խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տ. Նազարեան յուշագիրը յետագայում առիթներ ունեցել է անձամբ առնչուելու նրանց հետ եւ համոզմունք դարձած այս բնութագիրը սասանելի չէ: Նոյնիսկ այն դիտարկումը, թէ Խրիմեան Հայրիկի իսկական կոչումը կաթողիկոս լինելը չէր, որով կարծես «սաւառնող Արծուին» շղթայեցին Վեհարանի չորս պատի մէջ, չի ստուերում Հայրիկի մասին ունեցած նրա հիացմունքը. «Յաւերծ էլ պիտի մնայ ՄԵԾ, պաղարիւն պատմագիրների մանրազնին նրա յոյժ կենսալից սիրու ու հոգին ուսումնասիրելուց յետոյ»<sup>14</sup>:

**Ս. Ղազար այցելութեան,** մասնաւորապէս Ալիշանի հետ հանդիպման մասին Նազարեանը գրում է. «Մինչեւ օրս էլ, կարծէմ, ցոլում են մեր առաջ Հ. Ղետնի Ալիշանի հրաշագեղ արեգաչերի հառագայթները: Այդ օրը հենց այնտեղ մտնում ուխտեցի հետևեալ այցիս մեծ հայրենասէրին բերել սուրբ Մասսի լանջերից անբառամ ու համասփիւռ ծաղիկներից մի փունջ, Մայր Արքանոց մի սրուակ ջուր: Բայց աւա՛ղ, հետևեալ այցիս ես նրա սուրբ շիրիմը ցուեցի արտասուլմեներովլս»<sup>15</sup>: Յաւօք, յուշագիրը չի արձանագրում իր գլխում ծագած այդ մտքի առիթն ու պատճառը, աւելի ճիշտ՝ այն երկխօսութիւննը, որ տեղի է ունեցել իր եւ Ալիշանի միջեւ: Քաղաքերուած հատուածը նրբօրէն յիշեցնում է իսահակեանի յուշերում եւս մատնանշուող հայրենիքի խորհրդանիշները՝ Մասիս, Հայրենի Հող, ծաղիկներ, մայր գետի ջուր: Ուրեմն, ամենայն հաւանականութեամբ, հայրենի երկրի, նրա արժէքների նկատմամբ մշտավառ սէրը, կարօտը, եղել են հայրենիքից նրան այցելող իւրաքանչիւր հայի հետ ունեցած զրոյցի թեման: Աւելին. **Ս. Ղազար այցելող ազգային հիւրերին յաճախ Հայր Ալիշանն էր ուղեկցում ասելով.** «Ես ինքս ինդրած եմ, կ'ախործիմ ազգային մը տեսնելով»<sup>16</sup>: Զքոսանքի աւարտից յետոյ ան-

13 Անդ, էջ 164:

14 Անդ:

15 Անդ, էջ 166:

16 Անդ, էջ 82:

**նկարագրելի զարմանքն է պատում հիւրերին, երբ պարզում է, որ «այն համեստ ծերութիւն է եղեր հ. Ալիշանը»<sup>17</sup>:**

**Ցուշերում երկու հայորդիների դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերեւս յուշագիրների առաջին կամ վերջին տեսակցութիւնը կամ հանդիպումն է, որն ուրուագծւում է բնորդի անմուտանալի յատկանիշներով. «Անպահնյա խցի դուռը բացուեցաւ: Քառակուսի, լուսաւոր եւ անզարդ սենեակի մի կողմում դրուած էր անկողին, իսկ ձախակողմեան պատի առաջ գրիերով եւ թղթերով ծածկուած սեղանի հետեւը նստած էր մի պահապահ, բարձրայօն վարդապետ, որ վեր կենալով ողջունեց ինձ սիրով եւ հրաւիրեց նստելու: Այդ բարձրահասակ, բաղցրադէմ ծերութիւն էր հայր Ղեւոնդ Ալիշանը»<sup>18</sup> (*Նիկողայոս Քարամեան*): Կամ «Վերջին անգամ Հայրիկին տեսայ 1906 թուի աշնանը. ցաւալիօրէն թոյլ էր եւ գունատ»<sup>19</sup>:**

**Տիրան Փիրումեանը յիշողութիւններում տուել է Հայրիկի դիմանկարը՝ արտաքին բարեմասնութիւնների ընդգծումով՝ երբեմն առանձնացնելով նրա ժպիտը, աչքերը, դէմքը, ձայնը եւ այլն. «Հայրիկը ամէն բանի մէջ Հայրիկ է: Քարոզելիս նա չէ փոխում մազաշի: Նոյն բաղցր-մելամադու ժպիտը, նոյն արդար ու հանգիստ սիրտը, նոյն մտախոն ու վսեմ աչքերը, նոյն անուշ մարդասէր ու լսողի սիրտը ծակող ձայնը...»<sup>20</sup>: **Շիրվանզագէի գրչի տակ եւս կերպարագծուել է Հայրիկի ներշնչող դիմանկարը.** «Աննման էր Խրիմեան Հայրիկի արտաքինը: Ուժից մինչեւ գլուխ մարմնացած գեղեցկութիւն: Ոչ մի լուսանկարով չի կարելի պատկերացնել Խրիմեանի դէմքը, մասաւանդ խոշոր կապտագոյն աչքերի արտայայտութիւնը»<sup>21</sup>:**

**Երկու հայորդիների արտաքին բարեմասնութիւններին համադրում են նրանց սրբակենցաղ վարքն ու գործունէութիւնը՝ կազմելով կատարեալ ներդաշնակութիւն:** «Հ. Ալիշանի ամբողջ կեանիքը եղած է նգնեսութեան խնկարան եւ դպրութեան թանգարան»<sup>22</sup>, գրում է Ս. Երեմեանը: **Շիրվանզագէն յիշում է. «Խրիմեանը իր**

17 Անդ, էջ 109:

18 Անդ, էջ 33-34:

19 ԻՍՍՀԱԿԵԱՆ, Ա., Երկնրի ժողովածու, հ. 5, էջ 22:

20 ՓԻՐՈՒՄԵԱՆՑ, Տ., Խրիմեան Հայրիկ (Խմ յիշողութիւններից), Թիֆլիս 1887, էջ 36:

21 ՇԻՐՈՒՄԵԱՆՑ, Ա., Կեամեթի քոլից: Ցուշեր, Երևան 1982, էջ 485-486:

22 Ալիշանը ժամանակակիցների յուշերում, էջ 127:

ժամանակից դուրս էր, չեմ ասում վեր կամ վար, այլ դուրս: Նա ուրիշ աշխարհի եւ ուրիշ շրջանի մարդ էր: Քրիստոսի ժամանակ նա կը լիներ մէկը երա առաքեալներից, Սուլրատի շրջանում նա կը լիներ փիլիսոփայ: Նրա միակ զէնքն էր իր հոգին, իր միտքը, իր հեղութիւնը եւ ներողամտութիւնը»<sup>23</sup>: Երկու հայորդիների համեստ, ազնիւ, աստուածավախ բնաւորութիւնը, միանալով բնատուր տաղանդին, անխոնջ աշխատասիրութեանը, անօրինակ հայրենասիրութեանը, կերտում էր ստեղծագործող հոգեւորականի մի բարձր կերպար, որի հենաչարժիչ ուժերն են՝ Աստուած եւ հայրենիք:

Խրիմեան Հայրիկին կերպարագծել է նաեւ Աւ. Ահարոնեանը «Անդրանիկ եւ Խրիմեան Հայրիկ» երկում: «Խրիմեան եջմիածնի կաթողիկոս՝ նա ասես ծեր եւ հենապաշտ միարաններին գայթակղնենելու համար Վեհարանից իշխում էր գլխարաց, մի պարզ կապայ հագած եւ մի սովորական ձեռնափայտ ձեռքին, մեն-մինակ ժայլում էր դէպի լին կամ անտառ: Վանք եւ միարանութիւն թեշում էին նրան, հակառակ որ ինքը մեծագոյն նախանձախնդիր էր ե՛ւ մէկին, ե՛ւ միւսին: Վասպուրականի արծիւր պարզապէս խեղդում էր եջմիածնում «եղէ ես որպէս թեթուով ի տանիս Ս. Էջմիածնի», ասում էր նա յանախ»<sup>24</sup>:

Շիրվանգագէն Հայրիկին բնութագրում է որպէս սրամտութեան մեծ վարպետ, հանճարեղ հոեսոր, թատրոնի սիրահար: «Թատրոնը,- ասում էր Հայրիկը,- երկրորդ եկեղեցի է: Անկատեսակ մը տանար է մարդկային բարքերը կրթելու եւ հոգին բարձրացնելու համար»<sup>25</sup>:

Յուշագիրները այս երկու բնորդների դիմանկարները կառուցել են տարբեր բառամիաւորների նրբագծերով, որոնք գործածութեան առումով հետաքրքրական իրողութիւններ են վեր հանում:

Յուշագիրները Ալիշանը բնութագրում է Ս. Ղազարու որի, խոհուն, մտածող, ամբողջ հայութեան սիրելի, ճգնութեան խնկարան, դպրութեան թանգարան, իսկ Հայրիկը՝ գաղափարի եւ ազատութեան ջահակիր, քաջ Հայրապետ, Վասպուրականի արծիւր, կատարեալ մարմնացում Աւետարանի, Հայոց հրեշտակ եւ այլ արտայայտութիւններով:

23 Անդ, էջ 487:

24 ԱՀԱՐՈՆԵԱՆ, Ա., Ժողովածու երկերի, հ. 5, Թեհրան 1983, էջ 415-416:

25 Անդ, էջ 485:

**Պատահական չեն այս բնութագրիչները.** Ալիշան ջերմեռանդ հոգեւորականի բացառիկ մարդասիրութիւնը, անմնացորդ նուիրումը դիմացինին յաճախ են ընդգծում յուշագիրների մըսային հոսքերում. «Հ. Ղեւոնիդ վ. Ալիշան, բանատեղծ ըլլալէ առաջ քրիստոնեայ է, քրիստոնեայ մը, որ կատարելապէս խոնարի է եւ կը խորշի ամէն պատուէ, ամէն փառքէ...»<sup>26</sup>, - գրում է Ա. Արփիարեանը: **Մէկ այլ առիթով յիշում է.** «Կը յիշեմ զինքն, որ երբ հիւանդ էինք, անունաձայն, լոիկ-մնջիկ կու գար մեր անկողնին բովն ամէն օր, կը հոգար մեր առողջութեան համար, կը բաջակերէր ըզմնեզ ու կը խնամէր իր ձեռքերովը...»<sup>27</sup>. «Այդ մարդու համեստութիւնը, պարզութիւնը եւ խոնարհութիւնը միանգամայն առասպելական են»<sup>28</sup>, - խոստովանում է Մ. Զալեանը: «Ինքը, որ անհուն գորովանեֆ մը ունէր մեր ամէնուս վրայ, կը նեղուէր երբ մենք փոխադարձարար նոյնը կը ցուցնէինք իրեն»<sup>29</sup> (Հ. Յովհաննէս Թորոսեան): Յուշագիրները մեծագոյն ակնածանքով հաստատում ու վերահաստատում են այն գաղափարը, որ Ալիշանը Մ. Ղազարի ոգին էր, սուրբ մարդ, որ «ամէնուն զօրավիճն է, ամէնուն միջիքանքն է, ամէնուն սկըն է»<sup>30</sup>:

**Փ. Թերլեմեզեանը** «Կեանիս յուշերը» գրքում ներկայացնում է Խրիմեան Հայոթիկի «շինարար եւ օգտակար գործունեութիւնը», տալիս նրա մարդասիրական նկարագիրը, անշահ օգնութիւնը կարուսեալներին: Անդրադառնալով Խրիմեանի գործունէութեանը՝ մեծ նկարիչը գրում է. «Խրիմեան՝ Փոքր Ասիայի նախապարհներից գուրկ խուլ անկիւնում՝ Վասպուրականում, մամուլ է քերել ու քերք հրատարակել: Իր բնական պերճախօսութեամբ ու անձանձոյթ եւ նուիրուած գործունէութեամբ հասարակական աշխատանիքի ընդունակ նոր մարդիկ է հասցըել:

Յետոյ Փորքուգալեանի հետ միասին երկարատեւ նիրիի ու սարսափի մատնուած հայ ժողովրդի զարքօնիքի համար դպրոցներ են բացել եւ գրական ու բանաւոր պրոպագանդայով յաջողել են որոշ չափով յեղափոխական շարժում առաջ քերել»<sup>31</sup>:

**Այսպէս՝ յուշային ընդհանուր շղթայի շրջանակում հայոց երակու հու հանձարեղ հսկաների գուգահեռ քննութիւնը ունի որոշակի**

26 Ալիշանը ժամանակակիցների յուշերում, էջ 43:

27 Անդ, էջ 76:

28 Անդ, էջ 86:

29 Անդ, էջ 108:

30 Անդ, էջ 78:

31 ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ, Փ., Կեանիս յուշերը, Երևան 2017, էջ 85-86:

նպատակ. մէկ անգամ եւս ամրագրել, որ թէ՛ Ալիշանը, թէ՛ Խ-  
րիմեանը միաւորւում են ոչ միայն իբրեւ հոգեւոր եւ մոտաւոր  
հսկաներ, այլեւ հայ ժողովրդի անօրինակ նուիրեալներ<sup>32</sup>: Ինչպէս  
գրում է Մ. Վարանդեանը, «Խրիմեանը Հայր Ալիշանն էր հաստա-  
տուած հայրենի հողի վրայ, հարազատ ցեղի ծոցում, նրա հսկայ ող-  
քերգութեան անմիջապէս հաղորդակից, նրա վշտու գանգատներին  
անմիջապէս ձայնակից»<sup>33</sup>: Նրանց կեանքն ու գործունէութիւնը, ի-  
րենց առանձնայատկութիւններով հանդերձ, մեծ իմաստով պայ-  
մանաւորուած են եղել հայրենիքի պատմական ճակատագրով:  
Իսկ աւելի մասնաւոր դիտարկումների շրջանակում կարող ենք  
մատնանշել մի քանի ընդհանուր յատկանիշներ:

**Ա.- Նրանք հասակակիցներ են. Երկուսն էլ ծնուել են  
1820ին արեւմտահայ դաժան իրականութեան մէջ:**

**Բ.- Երկուսն էլ հոգեւոր այլեր են, Ամենաբարձրեալ Աստ-  
ծուն աղօթող, բայցեւ խօսքից, քարոզից գործի անցնող. Ալիշա-  
նը ծառայել է հայրենիքից հեռու՝ Վենետիկի Միլիթարեան մի-  
աբանութեան մէջ, Խրիմեանը՝ հայրենիքում:**

**Գ.- Երկուսն էլ աստուածաբան են, Փիլիսոփայ, գրող,  
մանկավարժ:**

**Դ.- Պատահական օրինաչափութեամբ Երկուսին էլ համե-  
մատել են քերթողահայր Խորենացու հետ: Այսպէս. 1876ին Վանի  
Հրդեհի եւ կողոպուտի ժամանակ Հայրիկը հեղինակել է «Վան-  
գոյժը», իսկ յետագյում՝ «Հայգոյժը»: Այդ Հրդեհի առիթով յու-  
շագիրը գրում է. «Խրիմեանը մի բրոշիւրով սարսապահեցիկ մի բուռ  
ջուր է քափում այդ մոխրակոյսի վրայ իր Վան Գոյժով: Այս երկու  
ստեղծագործութիւնները բաւական եղան հեղինակին «ԺԹ. դարի Խո-  
րենացի» հոչակելու համար»<sup>34</sup>:**

32 Մի առիթով Թումանեանը, խօսելով Խմբիրլեանի ու Խրիմեանի մասին,  
գրել է. «Երկուսն էլ խոշոր հայ դէմքներ էին, գերազանցօրէն հայ: Եր-  
կուսն էլ շատ ապրած իրենց ժողովրդի տառապանքով: Երկուսն էլ հո-  
գեւորական էին բառի լայն իմաստով, երկուսն էլ սիրում էին Ս. Գիր-  
քը ու Առիքուած էին հայրենի Եկեղեցուն» (ԹՌԻՄԱՆԵԱՆ, Յ., ԵԼԺ,  
հ. 6, էջ 268): Այս միտքը անվերապահօրէն կարելի է վերագրել Հ. Ղ.  
Ալիշան - Խրիմեան Հայրիկի հսկաներին:

33 ՎԱՐՍՆԴԵԱՆ, Մ., Հայկակամ շարժման մայնապատմութիւնը, Ժնև  
1912, էջ 294:

34 ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ, Փ., Կեամֆիս յուշերը, նշ. աշխ., էջ 62:

**Հ. 2. Ալիշանը կեանքի յիսուն տարիները նուիրել է մեր պատմութեան ուսումնասիրութեանը՝ վաստակելով նոր քերթողահայր պատուանունը:** «Երկ այդ բազմատեսակ գործերն ել չինեին,- գրում է պատմաբան, մանկավարժ Ն. Քարամեանը,- նա դարձեալ պիտի արժանանար նոր քերթողահայր կոչման»<sup>35</sup>:

**Ե.- Երկու հսկաները համեմատում են թռչունների արքայի՝ արծուի հետ. Խրիմեան Հայրիկ - «Բերեցին ՎեհԱՓԱՌ տիտղոսը տուին, Վեհարանի չորս պատի մէջ շղթայցին՝ պահանջելով չինչ երերում սաւառնող ԱՐԾԻԻԼ քար լինի Աթոռի վրայ»<sup>36</sup> (*Տիգրան Նազարեան*), «Մօրուքը բաւամազ էր որպէս անապատական առիւծի բաշը: Բայց ինչ-որ աւելի նշանաւոր էր նորա հեզ եւ միեւնոյն ժամանակ այրական դէմքի վրայ, դրանք էին արծուի խոշոր աչքերը եւ արծուի կտցանեւ ֆիքը»<sup>37</sup> (*Պաֆփի*): Հ. Ղեւոնդ Ալիշան - «Խստակեաց կեանք կը վարէր եւ բռչունի պէս կսնանէր, աւանդապահ էր սովորութիւններուն եւ պահպանող վանական կարգ ու կանոնին»<sup>38</sup>:**

**Հաշուի առնելով Հայոց երկու մեծերի մշակութային, հոգեկան, անձնային ընդհանրական յատկանիշները՝ մենք առաջարկում ենք շրջանառել բնութագրական երկու արտայայտութիւններ՝ ա. Հասակակից նորօրեայ Խորենացիները, բ. Հոգեւորական Հանրագիտակ հասակակիցներ:**

**Հայ ժողովրդի պատմութեան հոլովոյթում երկու հայորդիների ազգաշահ առաքելութիւնը ամրագրուել է բազում վաւերագրերում:** Յիշարժան է Վազգէն Ա. վեհափառի դիտարկումներից մէկը: 1956ի Մարտին Վենեստիկում կաթողիկոսն այցելել է Մխիթարեաններին եւ ջերմօրէն ողջունելով նրանց՝ ընդգծել վերջիններիս հսկայական երախտիքը հայ մշակոյթի զարգացման գործում եւ իր ելոյթն աւարտել՝ ասելով «անցեալում Խրիմեան Հայրիկն ու Հ. Ղեւոնդ Ալիշանը եցմիածնի ու Սուրբ Ղազար կղզու վանքի միջեւ համագործակցութեան վիրխարի կամար են կառուցել եւ ինքը եկել է այդ կամարն ամբապնդելու»<sup>39</sup>:

35 Ալիշանը ժամանակակիցմերի յուշերում, Աշ. աշխ., էջ 42:

36 Անդ, էջ 163:

37 ՐՍՖԹԻ, Արժիւ Վասպուրականի, Թիֆլիս 1893, էջ 34-35:

38 Անդ, էջ 227:

39 Տե՛ս Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ., Երևան 2008, էջ 274:

Երկու մեծերի ներշնչող անունները դաջուած կը մնան հայ ժողովրդի յիշողութեան մատեանում այնքան ժամանակ, քանի կան հայն ու Հայաստանը:

Բոլոր ժամանակներում էլ հնչեղ են Հ Ղեւոնդ Ալիշանի խօսքերը՝ քաղուած յուշագրութեան բնագրից. «Ծրջահայեա'ց եղեք, սիրեցէ՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը եւ սիրեցէ՛ք միմեանց»:

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍԵԱՆ

### Summary

## FR. GHEVOND ALISHAN – KHRIMIAN HAYRIK: MEMORY CORRELATIONS

EVA MNATSAKANYAN - ASHOT GALSTYAN

The memories about Ghevond Alishan and Khrimian Hayrik have cultural and source- study importance and they depict the two great sons of Armenia in a very impressive and colorful way.

The pillars of the selves of these two Armenians, the driving forces of their worldview, their past emotions and future hopes are the Armenian homeland, Armenians themselves, their souls and breath, customs, happiness and sorrow. All this is opened up in the memories of their contemporaries with bright and vivid colors.

The two giants of patriotism are discussed in one common chain, which shows them a philosophers and theologists, writers and the most importantly, two man of the same age.

As posers of memoranda, Alishan and Khrimian are presented with all their undeniable and exceptional values. The memoranda writers depict them in different delicate lines, which highlight important realities.